ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 40-21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» «02» 2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Արմեն Խաչատրյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ**-ը, ի դեմս տնօրենի պ/կ Սերգեյ Մադաթյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի **«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն** որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների»** 2021 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված **1162 «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների»** ծրագրի **11013. «Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»** միջոցառմամբ նախատեսված մինչև ***165 156 200 (հարյուր վաթսունհինգ միլիոն հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր)*** դրամ գումար (ներառյալ ԱԱՀ-ն)՝ 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումները, ծախսերի նախահաշիվը, Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ներկայացված են սույն պայմանագրի համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջել Ծրագիրը կատարել պայմանագրով սահմանված ժամկետներում.

2.1.2 Կազմակերպությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, ինչպես նաև հաշվետվություն՝ դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը.

2.1.3 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4 Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագիրը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 առանց իրականացված Ծրագրի միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի իրականացման ժամկետները (Ծրագրի իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Ծրագրային միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.6 սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված Ծրագրային միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն Պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.1. սույն Պայմանագրի մաս կազմող N 4 հավելվածով սահմանված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները՝ 2.1.2 կետով սահմանված Հ-8 ձևաչափով ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ 2.1.2 կետով սահմանված Հ-2 և Հ-4 ձևաչափերով ներկայացնել եռամսյակային հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած

տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:
2.4.9. Սույն Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:
3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի կատարման համար կազմակերպությանը, որպես դրամաշնորհ վճարել պայմանագրի 1.1. կետով նախատեսված գումարը:
4.2. Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր, իսկ անհրաժեշտության դեպքում հունվար ամսվա հայտը կարող է ներկայացվել տվյալ տարվա հունվար ամսվա ընթացքում՝ սույն Պայմանագրով սահմանված N 2 ձևաչափով, իսկ Պետական մարմինը՝ այն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն հայտով պահանջվող գումարը վճարում է Կազմակերպությանը: Հայտով պահանջվող ֆինանսավորման չափը չի կարող գերազանցել սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով հաշվետու ամսվա համար նախատեսված գումարի չափը: Ընդ որում՝ եռամսյակային հաշվետվությունների չընդունման դեպքում ֆինանսավորումը դադարեցվում է մինչև կատարված աշխատանքների ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից, հետևյալ Հավելվածներից և Ձևերից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը.
Հավելված N 1 -Ծրագրի միջոցառումներ,
Հավելված N 2- Ծրագրի ծախսերի նախահաշիվ,
Հավելված N 3 – Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց,
Հավելված N 4 - Ծրագրի միջոցառումների և ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց,

Ձև N 1 - Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություն,

Ձև N 2 – Ծախսերի կատարման հայտ:

8.2 Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2 կետում նշված ժամկետներում, Հաշվետվության հետ միասին, երկու օրինակից լրացված, ստորագրված և կնքված ներկայացվում է Կազմակերպության կողմից:

8.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 12 էջից, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.5 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900011010460 ՀՎՀՀ 02698604 Գլխավոր քարտուղար՝ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ Կ.Տ.	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ 0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900018002817 ՀՎՀՀ 00099892 Տնօրենի պ/կ՝ ՍԵՐԳԵՅ ՄԱԴԱԹՅԱՆ Կ.Տ.

02.02.2021թ.

Հավելված N 1
2021թ. «14»դեկտ» «10»-ին
կնքված N40-Ա պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»	Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան անհրաժեշտ գիտատեխնիկական գրականության ձեռք բերում, մշակում, դասակարգում, պահպանում և տարածում: Գրադարանային-տեղեկատվական մրցունակ համակարգերի ներդնում, նոր գրականության և թեմատիկ ցուցահանդեսների, գիտատեխնիկական և գործարար հանրությանն աջակցող միջոցառումների կազմակերպում, կադրերի վերապատրաստում:	Գրադարանային հավաքածուների պահպանություն և համալրման անընդհատության ապահովում:	Բաժանորդագրությամբ ձեռք բերված գիտատեխնիկական գրականություն (405 օրինակ)	31.12.2021թ.	24306,20
			Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության թվայնացում և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացում:	Համալրված էլեկտրոնային քարտարան (16800 գրառում)	31.12.2021թ.	34079,80
			Գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովում, համայնքային գրադարանների զարգացում:	Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում (168000 օրինակ գրադարանային փաստաթուղթ)	31.12.2021թ.	24585,3
			Մասնաճյուղերի ներգրավմամբ ապակենտրոնացված տեղեկատվական սպասարկում՝ Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայության միջոցով:	Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուներ (210 շահառու)	31.12.2021թ.	21975,2
			Մատենագիտական, վիճակագրական տվյալների, տեղեկատվական այլ ցանկերի կազմում ու հրապարակում:	Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր (43 ցանկ)	31.12.2021թ.	21985,6
			Միջազգային գրադարանային, պրոֆիլային ուղղվածության մասնագիտացված ՏԲ-ների մուտքի տրամադրում: Միջազգային համագործակցության ընդլայնում:	Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ (27 ՏԲ)	31.12.2021թ.	18650,4
			Համաշխարհային և հայ ժողովրդի գրավոր ժառանգության հանրահռչակում:	Նոր գրականության և թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպում (44 ցուցահանդես)	31.12.2021թ.	19573,7
	Ընդամենը					**165156,2**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010460
ՀԿՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002817
ՀԿՀՀ 00099892

Տնօրենի պ/կ՝

ՍԵՐԳԵՅ ՄԱՍՈՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 2
2021թ. Փետրվարի 10-ի կնքված
N 40-21 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Գումարը /հազ. դրամ/
	Անվանումները	
Ա	Բ	Գ
1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ այդ թվում՝	123210,8
1,1	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	123210,8
2	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ այդ թվում՝	13727,8
2,1	*Էներգետիկ ծառայություններ*	*5221,2*
2,2	*Կոմունալ ծառայություններ*	*464,0*
2,3	*Կապի ծառայություն*	*1851,3*
2,4	*Գույքի վարձակալություն*	*1650,0*
2,5	*Ներքին գործուղումներ*	*60,0*
2,6	*Համակարգչային ծառայություն(ՀԾ-հաշվապահ ծրագիր)*	*170,0*
2,7	*Աշխատակազմի մասնագիտական ծառայության ձեռքբերում*	*255,0*
2,8	*Տեղեկատվ.ծառայութ.-ներ(գրականության բաժանորդագրություն)*	*3000,0*
2,9	*Մասնագիտական ծառայություն*	*129,3*
2,10	*Համակարգչային սարք.ընթացիկ նորոգում և պահպանում*	*300,0*
2,11	*Գրասենյակային նյութեր*	*94,0*
2,12	*Տնտեսական ապրանքներ*	*203,0*
2,13	*Հատուկ նպատակային այլ նյութեր(COVID19)*	*330,0*
3	Այլ ընթացիկ ծախսեր այդ թվում՝	28217,6
3,1	*Այլ հարկեր*	27526,0
3.1.1	*- ՀՀ պետ.բյուջեի հատկացումների գծով հաշվ.ԱԱՀ*	*27526,0*
3,2	*Պարտադիր վճարներ*	691,6
	ԸՆԴԱՄԵՆԸ	165156,2

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010460
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002817
ՀՎՀՀ 00099892

Տնօրենի պ/կ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 3
2021թ. [illegible] -ի կնքված
N 40-Ա պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը՝ §Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն§ՊՈԱԿ

2.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
08	02	01	01	104004

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը 900011010460

Ծրագրի անվանումը Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր

(հազար դրամ)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին (աճողական)												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	4637	10 457,3	20 914,5	31 371,8	45 032,3	58 692,8	72 353,3	86 013,8	99 674,3	113 334,9	130 608,7	147 882,4	165 156,2	165 156,2
Ընդամենը		**10 457,3**	**20 914,5**	**31 371,8**	**45 032,3**	**58 692,8**	**72 353,3**	**86 013,8**	**99 674,3**	**113 334,9**	**130 608,7**	**147 882,4**	**165 156,2**	**165 156,2**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010460
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002817
ՀՎՀՀ 00099892

Տնօրենի պ/կ՝
ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 4
2021թ. դեկտեմբերի 10 -ի կնքված
N ԿԸ-21 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***

Հիմնարկի անվանումը՝ ***«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ***

Ծրագրի անվանումը ***«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ»***

Նկարագրությունը	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ընթացքում ընդ որում աճողական			
		I եռամսյակ	I կիսամյակ	իննը ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան անհրաժեշտ գիտատեխնիկական գրականության ձեռք բերում, մշակում, դասակարգում, պահպանում և տարածում: Գրադարանային-տեղեկատվական մրցունակ համակարգերի ներդնում, նոր գրականության և թեմատիկ ցուցահանդեսների, գիտատեխնիկական և գործարար հանրությանն աջակցող միջոցառումների կազմակերպում, կադրերի վերապատրաստում:	Ձեռք բերված գիտատեխնիկական գրականություն (օրինակ)	100	180	290	405
	Համալրված էլեկտրոնային քարտարան (գրառում)	16800	16800	16800	16800
	Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում (գրադարանային փաստաթուղթ)	168000	168000	168000	168000
	Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուներ (շահառու)	50	120	180	210
	Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր (ցանկ)	43	43	43	43
	Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ (ՏԲ)	27	27	27	27
	Նոր գրականության և թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպում (ցուցահանդես)	10	15	35	44

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010460
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002817
ՀՎՀՀ 00099892

Տնօրենի պտ՝

ՍԵՐԳԵՅ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

Ձև-1

Հաստատում եմ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____
Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

(Պետական մարմնի անվանումը)-ի և (Կազմակերպության անվանումը)-ի միջև «____» _____ 20___ -ին կնքված N_____ պայմանագրի շրջանակներում կազմակերպության կողմից 20___ թվականի _____«____»-ից «____» - ն ընկած ժամանակահատվածում կատարվել (մատուցվել) են պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (ծառայությունները).

Կատարված աշխատանքների (մատուցված ծառայությունների)									
Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Կատարման ժամանակա-հատվածը	Քանակական ցուցանիշները			Արժեքը (հազ. դրամ)		
				Նախատեսված		Փաստացի	Նախատեսված		Փաստացի
				Տարեսկզբին հաստատված	Ճշտված		Տարեսկզբին հաստատված	Ճշտված	
			(Ըստ եռամսյակների՝ աճողական)						
			(Ըստ փաստացի կատարման ժամանակա-հատվածի)						

Կատարված աշխատանքները համապատասխանում են կնքված պայմանագրին ու ծրագրին և ընդունվում են:

Աշխատանքը հանձնեց՝

_____

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Աշխատանքն ընդունեց՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Ֆինանսական ստորաբաժանման ղեկավար

_____

(ստորագրություն ազգանուն, անուն)

Ձև N 2

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱՅՏ N _____

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ (կազմակերպության անվանումը)

_____ (հաշվի համարը)

Բաժին Խումբ Դաս Ծրագիր (դասակարգում)

_____ (ամսաթիվ)

_____ (ծրագրի անվանումը)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի ստորագրություն՝ _____

Երկրորդ կարգի ստորագրություն՝ _____ Կ. Տ

Ծանուցում. *սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման մասին մանրամասն հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում*